ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 112-Ա
25 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2018թ.

ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ, ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՅՈՒՆԻՔ ԳՅՈՒՂԻ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 62/5 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՋՐԱՅԻՆ ՀՈՂԵՐԻՑ 0,00892 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ «ԿԱՊԱՆԻ ԼԵՌՆԱՀԱՐՍՏԱՑՄԱՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՕԳՏՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ /ՍԵՐՎԻՏՈՒՏ/ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21)-րդ կետով, Հողային օրենսգրքի 50-րդ հոդվածով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի ապրիլի 20-ի թիվ 723-Ն, Կապան համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 23-ի թիվ 10-Ն որոշումների, հիմք ընդունելով էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից 2012 թվականի նոյեմբերի 27-ին տրված ՇԱԹՎ-29/183 /նախկին 14/291/ օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվությունն ու թիվ ԼՎ-183 լեռնահատկացման ակտը և 2015 թվականի օգոստոսի 25-ի օգտակար հանածոների արդյունահանման 2012 թվականի նոյեմբերի 27-ի թիվ ՇԱԹՎ-29/183 թույլտվության ու թիվ ԼՎ-183 լեռնահատկացման ակտի փոփոխությունները, հաշվի առնելով համայնքի ղեկավարի պաշտոնակատարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության 10 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ արդյունքներով, ***համայնքի ավագանին որոշում է.***

1.Կապան համայնքի վարչական տարածքում, պետական սեփականություն հանդիսացող, Կապան համայնքի Սյունիք գյուղի Գաղթականների թաղամասի թիվ 62/5 հասցեում գտնվող, «ջրային» կատեգորիային «գետ» գործառնական նշանակության 0.00892 հա հողամասը /ծածկագիր 09-082-0722-0001/ սահմանափակ օգտվելու իրավունքով /սերվիտուտ/ խողովակաշարի անցկացման նպատակով՝ 25 (քսանհինգ) տարի ժամկետով տրամադրել «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲ ընկերությանը, տարեկան վարձավճար սահմանելով 2220.0 /երկու հազար երկու հարյուր քսան/ դրամ:

2. Համայնքի ղեկավարի պաշտոնակատարին՝ սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կողմ (10)՝

ԱՍՐՅԱՆ ՎԱՉԵ	ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ	ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ
ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԵ	ՄԵՍՐՈՊՅԱՆ ՆԱՊՈԼԵՈՆ
ԴԱՎԹՅԱՆ ՆԱՐԵԿ	ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԱ
ԴԱՎԹՅԱՆ ՇԱՆԹ	ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ

Դեմ (0)

Ձեռնպահ (0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆԱՐԵԿ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

2018 թ սեպտեմբերի 26

ք. Կապան